

ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ և
ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ

ABSTRACT
**THE USE OF COMPLEX SENTENCES AND THE PROBLEM OF
THEIR TRANSLATION IN INTERNATIONAL AGREEMENTS**

This article is devoted to the study of complex sentences used in official legal documents. The use of complex syntactic structures is a must (mandatory) in formal writing. When there is a need to make the speech multi-content and full of information, the use of complex structures (sometimes with more than a dozen components) is simply inevitable. Therefore, the syntactic study of special multi-component connections characteristic of legal official style in general and the functional manifestation of documents and contracts in particular – is a necessary prerequisite for understanding the mentioned discourse variety. It is obvious that the translator should be familiar with all the types and forms of complex sentence structure in order to first understand the English meanings and then accurately present them in the Armenian translation.

Key words: *legal language, legal document, complex sentences and structures, translation, semantic accuracy.*

* e-mail: varduhimirijanyan@gmail.com



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 10/05/2024

Revised: 24/05/2024

Accepted: 27/05/2024

© The Author(s) 2024

РЕЗЮМЕ

СЛОЖНЫЕ ПРЕДЛОЖЕНИЯ И ПРОБЛЕМА ИХ ПЕРЕВОДА В МЕЖДУНАРОДНЫХ ДОГОВОРАХ

Данная статья посвящена исследованию сложных предложений, используемых в официальных юридических документах. Использование сложных синтаксических структур является типичным в официально-документальном письме. Когда возникает необходимость сделать дискурс многосодержательным и информативным, использование сложных структур (иногда насчитывающих более десятка компонентов) просто неизбежно. Поэтому синтаксическое изучение особых многокомпонентных связей, характерных для официально-правового стиля вообще и функционального документального стиля в частности, является необходимой предпосылкой понимания этого дискурса. Очевидно, что переводчик должен быть знаком со всеми видами и формами построения сложных предложений, чтобы сначала понять смысл английского выражения, а затем точно представить его в армянском переводе.

***Ключевые слова:** юридический язык, юридический документ, сложные предложения и конструкции, перевод, семантическая точность.*

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածը նվիրված է իրավաբանական պաշտոնական փաստաթղթերում կիրառվող բարդ նախադասությունների ուսումնասիրությանը: Շարահյուսական բարդ կառույցների գործածությունը պաշտոնական գրագրության մեջ պարտադիր պայման է: Երբ անհրաժեշտություն կա գրավոր խոսքը դարձնելու բազմաբովանդակ և տեղեկություններով հագեցած, բարդ կառույցների (երբեմն մեկ տասնյակից անցնող բաղադրիչներով) կիրառությունն ուղղակի անխուսափելի է: Հետևաբար, իրավաբանական պաշտոնական ոճին ընդհանրապես և փաստաթղթերի գործառական դրսևորմանը մասնավորապես բնորոշ հատուկ բազմաբաղադրիչ կապակցությունների շարահյուսական ուսումնասիրությունը այդ խոսքի ընկալման անհրաժեշտ

նախապայման է: Ակնհայտ է, որ թարգմանիչը պետք է ծանոթ լինի բարդ նախադասությունների կազմության բոլոր տեսակներին և ձևերին, որպեսզի նախ՝ ընկալի անգլերեն ասույթների իմաստը, ապա՝ ճշգրիտ ներկայացնի այն հայերեն թարգմանության մեջ:

***Բանալի բառեր**՝ իրավական լեզու, իրավաբանական փաստաթուղթ, բարդ նախադասություններ և կառույցներ, թարգմանություն, իմաստային ճշգրտություն:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իրավաբանական գրագրության ձևերը բազմազան են՝ հրաման, որոշում, ծանուցագիր դատական ակտ, միջազգային և տեղական պայմանագրեր և այլն: Բազմազանությամբ հանդերձ՝ նշված գործառական տարատեսակներն ունեն ձևակերպման և շարադրանքի ընդհանրություններ: Դրանցում կարևոր են ոչ միայն հաղորդվող նյութի բովանդակությունը, փաստերն ու փաստարկումները, այլև ձևավորումը, շարադրելու մշակույթը, լեզվական անհրաժեշտ միջոցների, ձևերի ու կառույցների ընտրությունը: Ըստ էության, մեծ չափով հենց այդ ընտրությունն է պայմանավորում տեքստի իմաստային ճշգրտությունը:

Իրավաբանությունը, բազում առաքելություններից գատ, կոչված է նաև յուրահատուկ երկխոսություն վարելու հանրության հետ: Այդ երկխոսությունը ապահովող կարևոր բաղադրիչներից են իրավական տեքստերի մատչելիությունն ու ճշգրտությունը: Տեքստը պետք է հասկանալի լինի ոչ միայն մասնագետ իրավաբանին, այլև ներգրավված բոլոր կողմերին: Այն չպետք է խճճված լինի հանրությանն անհասկանալի բառերով ու արտահայտություններով (Ավետիսյան, Մկրտչյան, Մարգարյան, 2019: 3): Հետևաբար,

թարգմանիչը պետք է ունենա ոչ միայն մասնագիտական գիտելիք և հմտություն, այլև շարահյուսական կառույցներն և դրանց իմաստային բոլոր նրբությունները ճիշտ ընկալելու ունակություն՝ հրաշալի տիրապետելով և՛ իր մայրենի լեզվին, և՛ այն լեզվին, որից կատարում է թարգմանությունը (Currell, 2006):

Ա. Շվեյցերը թարգմանությունը սահմանում է որպես «միջլեզվական և միջմշակութային միակողմանի և երկփուլ պրոցես, որի ընթացքում առաջնային տեքստի նպատակաուղղված (թարգմանչական) վերլուծության հիման վրա ստեղծվում է երկրորդային տեքստը (մետատեքստ), որը փոխարինում է առաջնային տեքստին այլ լեզվական և մշակութային միջավայրում» (Швейцер, 1988: 75): Առաջնային տեքստի թարգմանությունը կամ մետատեքստի ստեղծումը առավել դժվար է իրավաբանական պաշտոնական փաստաթղթերի դեպքում, քանի որ փաստաթղթերն առնչվում են և՛ նախադասությունների բարդությամբ ու երկարությամբ աչքի ընկնող պաշտոնական ոճին, և՛ նույն հատկանիշներով օժտված իրավաբանական դիսկուրսին: Ըստ Բաթիայի՝ այդպիսի նախադասությունների թարգմանությունը «ստեղծում է ըմբռնելիության խոչընդոտներ սովորական ընթերցողների համար»՝ ավելի բարդացնելով թարգմանչի խնդիրը (Bhatia, 1997: 147): Փորձենք բացահայտել այդ բարդ գործընթացի հետ կապված դժվարությունները՝ դիտարկելով 1950 թվականին Հռոմում վավերացված *Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms* միջազգային պայմանագիրը և դրա հայերեն

թարգմանությունը՝ *Կոնվենցիա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին*, որը Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2002 թվականին: Նշենք, որ տվյալ փաստաթղթի մեր կողմից քննարկվող անգլերեն տարբերակում հետագայում կատարված փոփոխությունները արտացոլված են նաև պայմանագրի հայերեն տարբերակում: Նախքան մեր բուն նյութի վերլուծությանն անդրադառնալը՝ պարզաբանենք բարդ նախադասություններին բնորոշ հիմնական առանձնահատկությունները:

Բարդ նախադասությունների դերը իրավաբանական պաշտոնական փաստաթղթերում

Պարզ նախադասությունները կարևոր դեր են կատարում պարզ, հստակ, ճշգրիտ ձևակերպումներ կառուցելիս, բայց երբ անհրաժեշտ է խոսքը դարձնել բազմաբովանդակ և հաղորդատարողունակ՝ բարդ կառույցների կիրառությունն անխուսափելի է: Բարդ նախադասությունները կազմվում են շաղկապներով, մակբայներով, դերանուններով, հարաբերականներով (*եթե, սպա, քանի որ, այնպես ... ինչպես* և այլն, *otherwise, if, however, yet, that, which, when, nevertheless* և այլն) (Ավետիսյան, Մկրտչյան, Սարգսյան, 2019: 130; Wiredu, 2016: 40): Նաև նշենք, որ իրավաբանական փաստաթղթերում կիրառվող բարդ նախադասությունների կազմում գործուն դեր են կատարում նաև նախդիրները, ինչպես օրինակ, *in, at, on, to, from* և այլն (Rupert, 2009: 22):

Ինչպես բարդ համադասական, այնպես էլ բարդ ստորադասական նախադասության կազմի մեջ մտնող նախադասությունները կարող են միանալ նաև առանց կապակցող բառի: Բարդ ստորադասական նախադասության անդամներից որևէ մեկը արտահայտվում է երկրորդական նախադասությամբ: Բարդ ստորադասական նախադասության կազմի մեջ մտնող երկրորդական նախադասությունները կարող են լինել ենթակա, ստորոգելիական վերադիր, խնդիր, ժամանակի, տեղի, ձևի, նպատակի, պայմանի պարագա, զիջական, հետևանքի, համեմատության երկրորդական նախադասություններ, որոնք արտահայտում են իրական (իրագործելի) կամ անիրական (ցանկալի, ենթադրելի) պայմաններ (Թոքմաջյան, 1995: 215-220):

Իրավունքի լեզվում բարդ նախադասության շաղկապական կառույցները խոսքին տալիս են ճշգրտություն, որոշակի են դարձնում խոսքային միավորների հարաբերակցությունը: Երբ նպատակ կա ընդգծելու փաստաթղթի պատճառահետևանքային կապը, անելու ընդհանրացումներ և եզրակացություններ՝ շաղկապների կիրառությունը պարտադիր է: Նախապատվությունը չի տրվում անշաղկապությանը, քանի որ այն խոսքին տալիս է որոշակի հուզականություն, որը բնորոշ չէ փաստաթղթերի լեզվին: Նույն ձևով, թեև միակազմ նախադասությունները հստակ, համառոտ, հակիրճ խոսքի կառուցման լավ միջոց են (Ավետիսյան, 2011: 58), այդուհանդերձ փաստաթղթային լեզուն պահանջում է մտքերի ստուգություն, ճշգրտություն, հստակություն և դրանք արտահայտող,

այլասացությունը բացառող կառույցների կիրառություն, որն էլ ապահովվում է երկկազմ նախադասությունների գործածությամբ:

Պաշտոնական ոճում ընդհանրապես գերակշռում են բարդ համադասական և ստորադասական նախադասությունները՝ պատճառի, նպատակի, հետևանքի, հիմունքի և այլ երկրորդական նախադասություններ, որոնք առավելապես դատողություններ ու դրույթներ արտահայտող պատմողական բնույթի կառույցներ են՝ հիմնականում տեղեկատվական և նկարագրական բովանդակությամբ (Եզեկյան, 2007: 51): Իրավաբանական պաշտոնական փաստաթղթերի լեզուն ևս պահանջում է երկար և խրթին նախադասությունների կիրառություն: Հիմնական պատճառներից մեկը թերևս այն է, որ հաճախ անհրաժեշտ է մեկ նախադասության մեջ ամբարելու հնարավորինս շատ տեղեկություն՝ մեկտեղելով գործողությունը, գործողության հիմունքը, հակառակ հիմունքը, պատճառը, տեղը, ձևը, օբյեկտը և սուբյեկտը (Ավետիսյան, Մկրտչյան, Մարգսյան, 2019: 132-133): Արդյունքում խոսքի գործառական այս տարատեսակը այլ ոճագործառական դրսևորումներից մեծապես տարբերվող ձև և բովանդակություն է ստանում (Gibbons, 1994; Wiredu, 2016):

Նախքան բարդ նախադասությունների վերլուծությանն անդրադառնալը (և՛ անզլերեն, և՛ հայերեն իրավական տեքստերում)՝ հարկ է քննարկել, թե ինչ է իրենից ներկայացնում առհասարակ բարդ նախադասությունը: Բարդ է կոչվում այն նախադասությունը, որն արտահայտում է մեկից ավելի մտքեր և որտեղ կա մի քանի

ստորոգում (հատկապես պաշտոնական գրություններում): Բարդ նախադասությունները, ըստ իրենց կազմում եղած բաղադրիչ նախադասությունների միջև դրսևորվող շարահյուսական հարաբերությունների բնույթի, բաժանվում են երկու խմբի՝ բարդ համադասական (the compound sentence) և բարդ ստորադասական (the complex sentence): Երկու խմբերի միջև տարբերությունը հիմնականում պայմանավորված է համադասական և ստորադասական շաղկապների և հարաբերական դերանունների շարահյուսական կիրառական առանձնահատկություններով. համադասական շաղկապները կապում են շարահյուսորեն համադաս և հավասարազոր անդամներ/նախադասություններ, իսկ ստորադասական շաղկապներն ու հարաբերական դերանունները՝ շարահյուսորեն ոչ համագոր, ստորադաս նախադասություններ (Գարեգինյան, 1984: 16): Երկրորդական նախադասությունները գլխավորի նկատմամբ կարող են ունենալ տարբեր բնույթի հարաբերություններ և հանդես գալ շարահյուսական տարբեր պաշտոններով՝ փոխարինելով նրա այս կամ այն անդամին: Երկրորդական նախադասությունները կարող են դրվել տարբեր դիրքերում և լինել առաջադաս, միջադաս և վերջադաս: Ինչպես արդեն նշեցինք, բարդ ստորադասական նախադասության կազմում երկրորդական նախադասությունները լինում են ենթակա, ստորոգելիական, գոյականական և բայական անդամներին լրացնող հարաբերակից նախադասություններ (Եգեկյան, 2007: 358-359):

Համադասական շաղկապները պարզ նախադասություններում կապակցում են քերականորեն անկախ կամ համագոր անդամներ, իսկ բարդ նախադասություններում՝ համագոր նախադասություններ: Հայերենի համադասական շաղկապներն են՝ *և, ու, իսկ, բայց, սակայն, անգամ, մանավանդ, ուրեմն* և այլն: Անգլերենում համադաս նախադասությունները ոչ միայն կապակցվում են համադասական շաղկապներով (*and, but, or, yet, for*), այլև մակբայներով. *other, or else, however, yet, nevertheless*: Բարդ համադասական նախադասության կազմի մեջ մտնող նախադասությունները կարող են միանալ նաև առանց կապակցող բառի:

Ի տարբերություն համադասականների՝ ստորադասական շաղկապները հանդես են գալիս բարդ ստորադասական նախադասությունների կազմում և արտահայտում են առարկաների, երևույթների, եղելությունների ստորադասական հարաբերություններ և նշված նախադասություններում կապում են երկրորդական նախադասությունները գլխավորի հետ և երկրորդական նախադասությունները միմյանց հետ (Եզեկյան, 2007: 315-316): Հայերենի ստորադասական շաղկապներն են՝ *որ, թե, եթե, որպեսզի, որովհետև, մինչև, թեև, թեկուզ, թեպետ, մինչև որ* և այլն, անգլերենինը՝ *because, since, as, although, while, whereas* և այլն:

Բարդ նախադասությունները մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանը վերաբերող կոնվենցիայում

Այժմ անդրադառնանք բարդ կառույցների կիրառությանը վերոնշյալ միջազգային պայմանագրի անգլերեն և հայերեն տարբերակներում:

***Convention for the Protection of Human Rights and Fundamental
Freedoms***

Rome, 4.XI.1950

*Being resolved, as the governments of European countries **which** are like-minded **and** have a common heritage of political traditions, ideals, freedom and the rule of law, to take the first steps for the collective enforcement of certain of the rights stated in the Universal Declaration,*

Have agreed as follows:

Վերոնշյալ փաստական նյութում թեև բարդ նախադասության ենթական բացահայտորեն չի նշվում, այնուամենայնիվ ակնհայտ է, որ այն արտահայտվում է *եվրոպական երկրների կառավարություններ (governments of European countries)* կապակցությամբ, քանի որ նախադասությունն ընդհանուր առմամբ վերաբերում է այդ կառավարությունների գործունեությանն ու դրանց կողմից ընդունած որոշումներին: Որոշիչ երկրորդական նախադասությունը (*which are like-minded and have a common heritage of political traditions, ideals, freedom and the rule of law*) լրացնում է գլխավոր նախադասության ներկա կերպով արտահայտված ենթակային: Երկրորդական նախադասությունը շարահյուսորեն կախված է գլխավոր նախադասությունից, լրացնում է նրան

ստորադասական շաղկապի միջոցով: Այս նախադասության մեջ երկրորդական նախադասությունը գտնվում է միջադաս դիրքում: *Being resolved* դերբայական կառույցը ամբողջ նախադասությունը ներկայացնելու գործառույթ է իրացնում և տվյալ համատեքստում ցույց է տալիս, որ եվրոպական երկրների կառույցները որոշում ընդունելու իրավասություն ունեն և վճռական են ընդունելու այն: Դերբայական կառույցը ներկայացնում կամ ներմուծում է ամբողջ նախադասության գլխավոր իմաստը, որն էլ նշված կառավարությունների կողմից պարտադրաբար կատարվելիք Համընդհանուր հռչակագրի դրույթների իրագործումն է: Նախադասության պարզեցված տարբերակը այս տեսքը կունենար՝ *The governments of European countries, which share similar ideals and traditions, have agreed to start working together to enforce certain rights from the Universal Declaration.*

ԿՈՆՎԵՆՏԻԱ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

(4-ը նոյեմբերի, 1950 թ., Հռոմ)

համակված վճռականությամբ՝ որպես միասնական հայացքների և քաղաքական ավանդույթների, իդեալների, ազատության և իրավական պետության ընդհանուր ժառանգություն ունեցող եվրոպական երկրների կառավարություններ՝ առաջին քայլերն անել Համընդհանուր հռչակագրում ամրագրված որոշ իրավունքների հավաքական իրականացման ճանապարհին, համաձայնեցին ներքոհիշյալի հետ.

Շարադասությունը նախադասության բառերի, բառակապակցությունների դասավորության կարգն է: Յուրաքանչյուր լեզվի նախադասություն ունի բառերի և բառակապակցությունների դասավորության իր կարգը կամ մի քանի կարգեր: Միշտ էլ կարելի է գտնել նախադասության այնպիսի դասավորություն, որը բոլորի համար կլինի սովորական, պարզ և ճիշտ: Հայերեն տարբերակը դերբայական դարձվածով պարզ նախադասություն է, որում համադաս որոշիչները կապակցված են *և* համադասական շաղկապով: Հայերեն թարգմանության մեջ ևս դերբայական դարձվածը հանդես է գալիս առաջադաս դիրքում՝ կետադրված բուժով (կարող է կետադրվել նաև ստորակետով): Ինչպես անգլերենում, այնպես էլ հայերենում **դերբայական դարձվածով կառույցները պաշտոնական խոսքի առանցքն են**: Եթե նպատակ կա բուն գործողությանը գուգահեռ ներկայացնելու գուզընթաց գործողություն(ներ), ապա դերբայական դարձվածը հարմար, նույնիսկ անփոխարինելի միջոց է՝ խոսքը դարձնելով սեղմ, ասելիքը՝ ավելի պարփակ և ամբողջական: Այդ է վկայում պայմանագրի նախաբանի հաջորդ կետերում կիրառվող կիրառված *նկատի ունենալով, կրկին հավաստելով* դերբայական դարձվածների բազմակի կիրառությունը:

Վերոնշյալ բարդ նախադասության հայերեն թարգմանությունը և՛ շարադասության, և՛ բառերի ընտրության առումով կարելի է հաջողված համարել, սակայն անդրադառնալով խորագրի շարադասությանը, չենք կարող չնշել, որ *ԿՈՆՎԵՆՅՒԱ ՄԱՐԴՈՒ*

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ խորագրում *կոնվենցիա* բառը նպատակահարմար կլինեն դնել վերջում՝ *ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ*: Եթե այս բառի՝ նախադասության սկզբում դնելու նպատակը փաստաթուղթը որպես պայմանագիր շեշտելն է, ապա կարելի էր նույն շարադասությունը կիրառել՝ *Կոնվենցիա* բառը գրաֆիկորեն առանձնացնելով առաջին տողում, իսկ հաջորդող ասույթը տալով նոր տողից.

ԿՈՆՎԵՆՑԻԱ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

Հետաքրքրական է նաև նշել, որ հատվածի անգլերեն տարբերակը պարունակում է 61 բառ, իսկ հայերենը՝ 45: Այս փաստը կարելի է բացատրել անգլերենի և հայերենի ձևաբանական և շարահյուսական մի շարք առանձնահատկություններով (հայերենը թեքական լեզու է, իսկ անգլերենը՝ վերլուծական) ինչպես նաև բարդ նախադասությունների կազմության տարբեր ձևերով:

Դիտարկենք հաջորդ հատվածի անգլերեն և հայերեն տարբերակները.

ARTICLE 26

Single-judge formation, Committees, Chambers and Grand Chamber

1. *To consider* cases brought before it, *Court* shall sit in a single-judge formation, in committees of three judges, in Chambers of seven judges and in a Grand Chamber of seventeen judges. The Court's Chamber shall set up committees for a fixed period of time. Everyone **who** is arrested shall be informed promptly, in a language **which** he understands, of the reasons for his arrest and of any charge against him.

Համատեքստի առաջին նախադասությունը պարզ նախադասություն է, որում անորոշ դերբայով (*to consider*) արտահայտված է նպատակի պարագան: Հայերեն տարբերակում այս փաստն ավելի ակնհայտ է՝ *Իրեն հանձնված գործերը քննելու համար*: Համատեքստի վերջին՝ բարդ նախադասությունը կազմված է գլխավոր նախադասությունից, որն է՝ *Everyone shall be informed promptly in a language of the reasons for his arrest and of any charge against him*, և որոշիչ երկրորդական նախադասություններից՝ *who is arrested* և *which he understands*, որոնք լրացնում են *Everyone* դերանունով արտահայտված ենթակային և *language* նախդրավոր խնդրին: Երկու դեպքում էլ այս երկրորդական նախադասությունները պարունակում են կարևոր տեղեկատվություն նախադասության այն անդամների մասին, որոնց վերաբերում են, ուստի չեն կարող զեղչվել: Հակառակ դեպքում նախադասության տեղեկատվությունը կխաթարվեր (տե՛ս վերոբերյալ գլխավոր նախադասությունը առանց համապատասխան երկրորդական նախադասությունների): Անգլերենում որոշիչ երկրորդական նախադասությունը սովորաբար կապակցվում է գլխավոր նախադասությանը *who*, *whose*, *which*, *that* հարաբերական

դերանուններով, ինչպես նաև հարաբերական մակբայներով՝ *where, when*:

Հոդված 26

Կոմիտեները, Պալատները և Մեծ պալատը

Իրեն հանձնված գործերը քննելու համար Դատարանը նիստեր գումարում է երեք դատավորից կազմված Պալատներում և տասնյոթ դատավորից կազմված Մեծ պալատում:

Դատարանի Պալատները որոշակի ժամկետով կազմում են կոմիտեներ: Յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների և ներկայացվող ցանկացած մեղադրանքի մասին:

Հայերեն տարբերակում անգլերենի անորոշ դերբայով կառույցը արտահայտված է կատարելի դերբայով և *համար* նախդիրով՝ գործողության կատարման նպատակը պարզ արտահայտելու համար: Ինչպես անգլերենում, այնպես էլ հայերենում՝ տվյալ միտքն արտահայտված է պարզ նախադասությամբ: Համատեքստի վերջին նախադասությունը, ի տարբերություն անգլերենի բարդ նախադասության՝ համադաս երկրորդական անդամներով պարզ նախադասություն է: Ակնհայտ է, որ եթե անգլերենում դիտարկեցինք նույն ասույթը որպես բարդ ստորադասական կառույց, ապա հայերեն թարգմանությունը ներկայացնում է համադասական կառույց, որը կազմված է համադաս բաղադրիչներից՝ երկու հավասարագոր նախդրավոր խնդիրներով (*ձերբակալման պատճառների և*

ներկայացվող ցանկացած մեղադրանքի մասին): Այս դեպքում ևս անգլերենն ավելի բազմաբառ է. 26 անգլերեն և 16 հայերեն բառ:

Դիտարկենք հաջորդ օրինակը.

ARTICLE 6

Right to a fair trial

*1. In the determination of his civil rights and obligations or of any criminal charge against him, everyone is entitled to a fair and public hearing within a reasonable time by an independent and impartial tribunal established by law. Judgment shall be pronounced publicly **but** the press and public may be excluded from all or part of the trial in the interests of morals, public order or national security in a democratic society, **where the interests of juveniles or the protection of the private life of the parties so require, or to the extent strictly necessary in the opinion of the court in special circumstances where publicity would prejudice the interests of justice.***

Ընդգծված բարդ ստորադասական նախադասության մեջ երկու երկրորդական նախադասությունները կապակցվել են գլխավոր նախադասությանը *where* շաղկապի միջոցով: Գլխավոր նախադասությունն ամբողջությամբ նկարագրական է: Սովորաբար անգլերենում *when* և *where*-ով կապակցվող երկրորդական նախադասությունները իրավական դիսկուրս են ներմուծում որոշակի իրավական ակտի հետ կապված հանգամանքներ (*where the interests of juveniles or the protection of the private life of the parties so require; where publicity would prejudice the interests of justice*), որոնք

հայերենում արտահայտվում են *եթե ... ապա*-ով կապակցվող երկրորդական նախադասություններով:

Հոդված 6³. Արդար դատաքննության իրավունք

Յուրաքանչյուր ոք, երբ որոշում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չընդունվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը:

Հայերեն հոդվածի կառույցը՝ ի տարբերություն անգլերենի բարդ ստորադասական կառույցի, բազմաբարդ համադասական նախադասություն է: Բազմաբարդ (բազմաբաղադրիչ) նախադասությունները երեք և ավելի բաղադրիչներ ունեցող բարդ

նախադասություններ են, որոնք գործածական են և՛ գեղարվեստական, և՛ գիտական ոճերում, մասամբ հանդիպում են նաև ժողովրդախոսակցական լեզվում (Եզեկյան, 2007: 370): Կարելի է պնդել, որ նախադասության այս տեսակը ավելի բնորոշ է պաշտոնական ոճին և հատկապես՝ իրավական պայմանագրերին: Այս նախադասությունները հիմնականում կարող են արտահայտել միավորիչ, տրոհական, համադրական, հակադրական հարաբերություններ և միմյանց հետ կապակցվել ինչպես շաղկապներով, այնպես և անշաղկապ կապակցություններով: Տվյալ բազմաբարդ համադասական նախադասությունը կազմվել է համադաս բաղադրիչներից, որոնք միմյանց հետ միավորվել են իմաստային հարաբերություններով: Նախադասության առաջին մասում առկա է սխալ ձևակերպում՝ *երբ որոշում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ*: Նախադասության երկրորդ մասում անորոշ բայաձև կիրառելու փոխարեն անհրաժեշտ էր կիրառել լիարժեք համադասական նախադասություն՝ *երբ որոշում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան է ներկայացվում ցանկացած քրեական մեղադրանք*: Այս դեպքում ևս կպահպանվեր բազմաբարդ համադասական տեսակը, այդուհանդերձ ճիշտ ձևակերպմամբ: Ինչպես նախորդ օրինակներում, այստեղ ևս բարդ նախադասությունների բնօրինակը

պարունակում է ավելի շատ բան, քան թարգմանությունը՝ անգլերենում առկա է 119 բան, հայերենում՝ 99:

ARTICLE 10

Freedom of expression

The exercise of these freedoms, since it carries with it duties and responsibilities, may be subject to such formalities, conditions, restrictions or penalties as are prescribed by law and are necessary in a democratic society, in the interests of national security, territorial integrity or public safety, for the prevention of disorder or crime, for the protection of health or morals, for the protection of the reputation or rights of others, for preventing the disclosure of information received in confidence, or for maintaining the authority and impartiality of the judiciary.

Հոդված 10. Արտահայտվելու ազատություն

Այս ազատությունների իրականացումը, **քանի որ** այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, **որոնք** նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, **ինչպես և** այլ

անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

Անգլերենի բազմաբառ բարդ ստորադասական նախադասությունը պարունակում է երկու երկրորդական նախադասություն՝ *since it carries with it duties and responsibilities* և *as are prescribed by law and are necessary in a democratic society, in the interests of national security, territorial integrity or public safety, for the prevention of disorder or crime, for the protection of health or morals, for the protection of the reputation or rights of others, for preventing the disclosure of information received in confidence, or for maintaining the authority and impartiality of the judiciary*: Պատճառի երկրորդական նախադասություններից առաջինը բացատրում է, թե ինչպես կարող է ազատությունների իրացումը ենթարկվել որոշակի պայմանների, սահմանափակումների, պատժամիջոցների: Երկրորդը մանրամասնում է, թե ինչպիսի պայմաններ, սահմանափակումներ են թույլատրվում կիրառել և ինչու:

Հայերենում ևս ունենք պատճառի երկրորդական նախադասություններ ստորադասական նախադասություն: Հայերենի *ինչպես և* կապակցող միավորը կարծես թե ավելի է ընդգծում կարևոր տեղեկություն պարունակող հատվածը՝ *ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության*

բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով): Սովորաբար ինչպես և-ը ընդմիջող միջոց է, որն ունի հաջորդող ասույթը կարևորելու միտում: Ինչպես նախորդ օրինակներում, այստեղ ևս անգլերենն ավելի բազմաբառ է՝ անգլերենում առկա է 94 բառ, հայերենում՝ 71:

ARTICLE 30

Relinquishment of jurisdiction to the Grand Chamber

When a case pending before a Chamber raises a serious question affecting the interpretation of the Convention or the Protocols thereto, **or where** the resolution of a question **before** the Chamber might have a result inconsistent **with** a judgment previously delivered by the Court, the Chamber may, at any time before it has rendered its judgment, relinquish jurisdiction in favour of the Grand Chamber.

Հոդված 30. Ընդդատության զիջումը Մեծ պալատին

Եթե Պալատի քննության ներքո գտնվող գործը հանգեցնում է Կոնվենցիայի կամ նրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանմանն առնչվող լուրջ հարցի, կամ **եթե** Պալատի քննության ներքո գտնվող հարցի լուծումը կարող է հակասել Դատարանի ավելի վաղ կայացրած որոշմանը, Պալատը կարող է, մինչև իր որոշումը կայացնելը, ցանկացած ժամանակ ընդդատությունը զիջել Մեծ պալատին, **եթե** կողմերից ոչ մեկը չի առարկում:

Անգլերենի վերոնշյալ բարդ ստորադասական նախադասությունը պարունակում է երեք երկրորդական նախադասություն:

1. *when a case pending before a Chamber raises a serious question affecting the interpretation of the Convention or the Protocols thereto,*
2. *where the resolution of a question before the Chamber might have a result inconsistent with a judgment previously delivered by the Court,*
3. *before it has rendered its judgment:*

Առաջինը պայմանի երկրորդական նախադասություն է, որը ներկայացնում է գլխավոր գործողության (*relinquishing jurisdiction*) իրացման հանգամանքները: Երկրորդը նույնպես պայմանի երկրորդական նախադասություն է, որը ներկայացնում է գլխավոր գործողության (*relinquishing jurisdiction*) իրացման մեկ այլ հանգամանք: Երրորդը ժամանակի պարագա երկրորդական նախադասություն է, որը պարզաբանում է գլխավոր գործողության (*relinquishing jurisdiction*) իրացման ժամկետը՝ ըստ դատարանի որոշման:

Անգլերենի և հայերենի կառույցները գրեթե համընկնում են: Հայերենում ևս գործ ունենք բարդ ստորադասական նախադասության հետ, որում ունենք մեկ այլ պայմանի երկրորդական նախադասություն, որը բացակայում է անգլերենում՝ *եթե կողմերից ոչ մեկը չի առարկում: Եթե (if) շաղկապը* իրավական պայմանագրերում աչքի է ընկնում կիրառության հաճախականությամբ, երբ անհրաժեշտ է պարտադիր շեշտել որևէ գործի կամ պայմանի հասկացության կարևորությունը: Ավելացնենք,

որ դիտարկվող համատեքստերի անգլերեն տարբերակում առկա է 73 բառ, հայերենում՝ 59:

Դիտարկենք ևս մեկ օրինակ, որտեղ *եթե (if)* շաղկապը անգլերենում է աչքի ընկնում բազմակի կիրառությամբ.

ARTICLE 41

Just satisfaction

*If the Court finds **that** there has been a violation of the Convention or the Protocols thereto, and **if** the internal law of the High Contracting Party concerned allows only partial reparation to be made, the Court shall, **if necessary**, afford just satisfaction to the injured party.*

Տվյալ բարդ ստորադասական նախադասություն մեջ պայմանի պարագա երկրորդական նախադասությունները բովանդակում են գլխավոր նախադասության ստորոգյալով պայմանավորվող գործողության կատարման պայման: Կապակցող բառերը *if* և *that* շաղկապներն են:

Հոդված 41. Արդարացի բավարարումը

Եթե Դատարանը գտնում է, **որ** տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, **իսկ** համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, **սպա** դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:

Անգլերենի բարդ ստորադասական նախադասությունը հայերենում արտահայտվել է բազմաբարդ ստորադասական նախադասության միջոցով: Եթե անգլերենում *եթե* շաղկապը կիրառվել է երեք անգամ, ապա հայերենում այն կիրառվել է մեկ անգամ, հաջորդող դեպքերում փոխարինվելով *իսկ* և *ապա* շաղկապներով: Անգլերենում առկա է 51 բառ, հայերենում՝ 42:

ARTICLE 7

No punishment without law

*2. This Article shall not prejudice the trial and punishment of any person for any act or omission **which**, at the time **when** it was committed, was criminal according to the general principles of law recognized by civilized nations.*

Հոդված 7⁴. Պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա

*2. Սույն հոդվածը չի խոչընդոտում ցանկացած անձի դատի տալ և պատժել որևէ գործողության կամ անգործության համար, **որը** կատարվելու պահին, քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքներին համապատասխան, համարվել է քրեական հանցագործություն:*

Անգլերեն և հայերեն հոդվածների երկու նախադասություններն էլ բարդ ստորադասական են և կապակցվում են շաղկապներով: Տարբերությունն այն է, որ անգլերեն նախադասության մեջ գործածվել է երկու շաղկապ (*which, when*), իսկ հայերենում՝ մեկ (*որը*): Անգլերեն տարբերակը պարունակում է 42 բառ, հայերենը՝ 36:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, իրավական պաշտոնական փաստաթղթերին և պայմանագրերին խիստ բնորոշ է խոսքին հանդիսավորություն և մատչելիություն հաղորդող բարդ ստորադասական նախադասությունների կիրառությունը: Շարահյուսական այս կառույցը նաև լավագույն միջոց է դատողություններ, եզրակացություններ, երևույթների պատճառահետևանքային կապեր ու փոխպայմանավորվածություն արտահայտելու համար: Ակնհայտ է, որ թարգմանիչը ևս պետք է ծանոթ լինի բարդ նախադասությունների կազմության բոլոր տեսակներին և ձևերին, որպեսզի նախ՝ ընկալի անգլերեն ասույթների իմաստը, ապա՝ ճշգրիտ ներկայացնի այն հայերեն թարգմանության մեջ: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանը վերաբերող միջազգային կոնվենցիայի անգլերեն և հայերեն տարբերակներում ներառված բարդ նախադասությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ իրավական պայմանագրերին, ինչպես հայերենում, այնպես էլ անգլերենում,

- բնորոշ է դերբայական դարձվածով կառույցների կիրառությունը,

- բնօրինակի բարդ ստորադասական կառույցները հիմնականում պահպանվում են թարգմանության մեջ,

- անգլերենի *when* և *where* շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասությունները իրավական խոսք են ներմուծում որոշակի իրավական ակտի հետ կապված

հանգամանքներ որոնք հայերենում արտահայտվում են *եթե...այսպիսի* շաղկապով կապակցվող երկրորդական նախադասություններով:

- հայերենի *եթե* և համապատասխանաբար անգլերենի *if* շաղկապը իրավական պայմանագրերում աչքի է ընկնում կիրառության հաճախականությամբ, երբ անհրաժեշտ է պարտադիր շեշտել որևէ գործի կամ պայմանի հասկացության կարևորությունը:

- պայմանագրի ընդհանուր առմամբ հաջողված համարվող հայերեն թարգմանության մեջ, այնուամենայնիվ առկա են ձևակերպման և շարադասության հետ կապված սխալներ:

Հետաքրքրական է նաև նշել, որ վերոնշյալ բոլոր համատեքստերում կիրառված անգլերեն բառերի քանակը կազմում է 424, իսկ հայերենինը՝ 323, որը կարելի է բացատրել անգլերենի և հայերենի ձևաբանական և շարահյուսական մի շարք առանձնահատկություններով (հայերենը թեքական լեզու է, իսկ անգլերենը՝ վերլուծական), ինչպես նաև բարդ նախադասությունների կազմության տարբեր ձևերով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Bhatia, V. (1997). *Translating Legal Genres. Text Typology and Translation*, p p. 203-217. DOI: <https://doi.org/10.1075/btl.26.15bha>
2. Currell, D., (2006) - As He Refined the Language: Dryden's Task as a Translator. *Literature Compass*, 3 (2), 159-171. DOI: <https://doi.org/10.1111/j.1741-4113.2006.00311.x>
3. European Convention on Human Rights. (1950). Council of Europe. Strasbourg, France.
URL:https://www.echr.coe.int/documents/d/echr/convention_eng

4. Gibbons, J. (1994). *Language and the Law*. New York: Longmans, p p. 443 – 469.
5. Rupert, H. (2009). *Legal English*. Abingdon: Routledge Cavendish, p p. 330.
6. Wiredu, J. F., (2016). The Complex Sentence in Legal English: A Study of Law Reports. *Journal of Literature: Languages and Linguistics*, Vol. 22, 29-46.
7. Ավետիսյան, Յ. (2011). *Պաշտոնական ոճ*: Երևան: Ջանգալ, 116 էջ:
8. Ավետիսյան, Յ., Մկրտչյան Ա., Սարգսյան Լ. (2019). *Իրավաբանական գրագրության լեզուն*: Երևան: ԵՊՀ, 202 էջ:
9. Գարեգինյան, Գ. (1984). *Ժամանակակից հայոց լեզու. բարդ նախադասություն*: Երևան: ԵՊՀ, 421 էջ:
10. Եզեկյան, Լ. (2006). *Հայոց լեզվի ոճագիտություն*: Երևան: ԵՊՀ, 378 էջ:
11. Եզեկյան, Լ. (2007). *Հայոց լեզու*: Երևան: ԵՊՀ, 203 էջ:
12. Թոքմաջյան, Հ. (1995). *Ժամանակակից անգլերենի քերականություն*: Երևան: Փյունիկ, 247 էջ:
13. Կոնվենցիա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին. (1950). Եվրոպայի խորհուրդ: Ստրասբուրգ, Ֆրանսիա: URL: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=20870>
14. Швейцер, А. (1988). *Теория перевода: Статус, проблемы, аспекты*. Москва: Наука, с. 215.